ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի (կնիքների և դրոշմակնիքների) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-06/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«26» ապրիլի 2017թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝
Կարեն Համբարձումյանը,

հանձնաժողովի անդամներ՝

Հովհաննես Ստեփանյանը,Ավետիք Ավագյանը,Արման Ղուկասյանը,Անահիտ Ավագյանը,

հանձնաժողովի քարտուղար՝
Դավիթ Թովմասյանը:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

«Ջի.Էս.Քոմփանի» ՍՊԸ-ն, «Տեխնիկա Պլուս» ՓԲԸ-ն սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել են ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի՝ Հրավերով սահմանված համապատասխան ապրանքների անվանումներին և տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ.

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 35-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ սահմանված՝ մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի անվանումն և տեխնիկական բնութագիրը հրավերով սահմանված ապրանքի անվանումին և տեխնիկական բնութագրին, ինչպես նաև համանման պայմանագրերի համապատասխանության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով հանձնաժողովը 21.04.2017թ. գրությամբ դիմել է պատասխանատու ստորաբաժանմանը՝ առաջարկելով մինչև 2017թ. ապրիլի 26-ը, ժամը 14:00-ն տրամադրել համապատասխան եզրակացությունը:

26.04.2017թ. պատասխանատու ստորաբաժանումը տրամադրել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի՝ «Ջի.Էս.Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Պայմանագիրը համարվում է համանման (նմանատիպ) գործարք, ինչպես նաև՝ «Ջի.Էս.Քոմփանի» ՍՊԸ-ի և «Տեխնիկա Պլուս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ապրանքների անվանումներն և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Հրավերով սահմանված անվանումներին և տեխնիկական բնութագրերին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ջի.Էս.Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<<Հավելված 5>>>-ում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը, իսկ «Տեխնիկա Պլուս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի պատճենը կնքված է 2017 թվականին անորոշ ժամկետով, ինչպես նաև՝ ներկայացված չեն պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները, այդ իսկ պատճառով Հանձնաժողովը որոշեց.

-հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2017թ. ապրիլի 28-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3.Հանձնաժողովի քարտուղարին.

Հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության մասին էլեկտրոնային նպանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի՝ նախագահ՝

Կ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Սահակյան

Ա. Ավագյան

Ա. Ղուկասյան

Ս. Ավագյան

Գնումների համակարգող՝
Ֆ. Ծուխանյան